ԲԱՆԿԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՌԵԵՍՏՐԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

ԲԱԺԻՆ 2: ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

Գլուխ 2: Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Բանկի միջնորդությամբ թողարկողին մատուցվող հիմնական ծառայություններ 4

Գլուխ 3: Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Հաշվի օպերատորի միջնորդությամբ թողարկողին մատուցվող լրացուցիչ ծառայություններ 9

ԲԱԺԻՆ 3: ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10

Գլուխ 4: Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Բանկի միջնորդությամբ հաշվետերերին մատուցվող արժեթղթերի (ինվեստիցիոն) հաշիվների վարման ծառայություններ 10

Գլուխ 5: Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահառուական ծառայություններ 15

ԲԱԺԻՆ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 1: Կանոնների կիրառության ոլորտը

1.1 Սույն կանոնները սահմանում են «ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ «Օրենք») վերապահված գործառույթների շրջանակներում, թողարկողներին և հաշվետերերին մատուցվող ծառայությունների սակագները:

1.2 Սակագների մասին կանոններն ուժի մեջ են մտնում Բանկի իրավասու մարմնի կողմից հաստատվելու և օրենքով սահմանված կարգով Բանկի կողմից դրանք Բանկի www.idbank.am տնային էջում հրապարակելու և/կամ հաճախորդների սպասարկման համար նախատեսված համապատասխան տեսանելի վայրում փակցնելու պահից:

1.3 Սույն կանոնների պահանջները կիրառվում են այն թողարկողների, հաշվետերերի, և այլ անձանց նկատմամբ, ովքեր օրենքով, Բանկի և կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով օգտվում են սույն կանոններով սահմանված ծառայություններից:

1.4 Բանկի կողմից սահմանված Սակագները գանձվում են ՀՀ դրամով՝ հաճախորդի դրամային հաշվից: Հաճախորդի դրամային հաշվին Սակագների գանձման համար անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում՝ դրանք գանձվում են հաշվին մուտքագրված գումարից:

1.5 Սակագները գանձվում են Բանկի կողմից ծառայությունը մատուցման պահին: Հաշվետիրոջ (այդ թվում՝ անվանատիրոջ) հաշիվներում առկա արժեթղթերի պահպանման սակագին չի հաշվարկվում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի նկատմամբ:

1.6 Բանկը մինչև հաշվետու ամսվան (ամսական կտրվածքով գանձվող միջնորդավճարների պարագայում) հաջորդող ամսվա 6-րդ աշխատանքային օրը ներառյալ հաշիվ է ներկայացնում ոչ հաշվետեր հաճախորդներին, այդ թվում թողարկողներին և հաշվետերերին մատուցված ծառայությունների ծավալին համապատասխան: Հաշիվ ստացած անձը պարտավոր է Բանկի կողմից հաշիվը ներկայացնելու պահից 8 աշխատանքային օրվա ընթացքում վճարել հաշվում ներառված գումարն ամբողջ ծավալով: Հաշվետեր հաճախորդներից սպասարկման վճարների գանձումը կատարվում է նրանց ընթացիկ դրամային հաշիվներից՝ Բանկի կողմից անակցեպտ գանձման միջոցով:

1.7 Բանկի կողմից գանձված Սակագները վերադարձման ենթակա չեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններս գանձվել են սխալմամբ:

1.8 Բանկն իրավունք ունի փոփոխել Սակագները, այդ մասին պատշաճ ծանուցելով հաճախորդին:

1.9 Սույն կանոններով նախատեսված սակագները չեն ներառում ավելացված արժեքի հարկը: Այն դեպքում, երբ սույն կանոններին համապատասխան հաշվարկված գումարները՝ ԱԱՀ-ն ներառյալ, կազմված են ամբողջ թվերից և նաև որոշակի լումաներից, ապա լումաները կլորացվում են դեպի ներքև 1 (մեկ) Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:

1.10 Բանկն իրավունք ունի կասեցնել սույն կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումն իր միջնորդությամբ ռեեստրի վարման և պահառության / ենթապահառության պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող թողարկողներին և հաշվետերերին, եթե

վերջիններս Բանկի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավել ժամկետանց պարտավորություն: Հաճախորդի կողմից սահմանված ժամկետում սպասարկման վճարը չվճարելու դեպքում Բանկի համապատասխան աշխատակիցը տեղեկացնում է հաճախորդին ժամկետանց գումարի և այն հնարավորինս սեղմ ժամկետներում մարելու պարտավորության անհրաժեշտության մասին:

1.11 Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում տեղեկություններ ստանալու և թողարկողի արժեթղթերի հաշվետերերի ռեեստրում գործողություններ կատարելու վերաբերյալ Բանկին հանձնարարականներ տալու իրավասություն ունեն ՀՀ կենտրոնական բանկը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատարանները, նոտարները, հետաքննության և նախաքննության մարմինները՝ ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգով ու դեպքերում:

1.12 Ծառայությունների մատուցման կասեցման ժամանակատավածում թողարկողի կամ հաշվետիրոջ կողմից օրենքով սահմանված դեպքերում պայմանագիրը լուծելու դեպքում թողարկողը կամ հաշվետերը պարտավոր է մարել Բանկի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները:

1.13 Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Բանկն իրավունք ունեն վերսկսել թողարկողին և հաշվետիրոջը ծառայությունների մատուցումը, այդ թվում վերակնքել ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս այն չվերակնքած թողարկողների կենտրոնական դեպոզիտարիայի համապատասխան կանոններով սահմանված կարգով, եթե այլ պահանջներ սահմանված չեն Բանկի կողմից:

1.14 Բանկը պահառության ծառայություններ մատուցում է միայն իր հաշվետեր հաճախորդներին: Առանց հաշվի բացման հաճախորդների սպասարկումն իրականացվում է գործադիր տնօրենի գրավոր թույլտվությամբ:

1.15 Հաճախորդն իր հաշվին պետք է ապահովի պահառության գծով Բանկին վճարվելիք առնվազն երեք ամսվա սպասարկման վճարի գումարը հաշվի բացման պահին:

1.16 Առանձին հաճախորդների համար վարչության որոշմամբ կարող են սահմանվել սույն կանոններում սահմանված սակագներից տարբերվող սակագներ, ընդ որում՝ նման սակագների սահմանման դեպքում վարչության որոշմամբ պետք է սահմանվեն այդ սակագների տրամադրման չափանիշները, որոնք կիրառելի կլինեն հաճախորդների տվյալ խմբի նկատմամբ:

ԲԱԺԻՆ 2: ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ 2: Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Բանկի միջնորդությամբ թողարկողին մատուցվող հիմնական ծառայություններ

2.1 Արժեթղթերի ընդհանուր հաշվառման (ռեեստրավարման) ծառայություններ

2.1.1 Թողարկողի արժեթղթերի ռեեստրի սկզբնական տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը

Թողարկողի վերաբերյալ տվյալների գրանցում ծրագրային Համակարգում		Անվճար
Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգում		Անվճար

2.1.2 Բաժնային արժեթղթերի, մասնակցության վկայագրերի, ներդրումային ֆոնդերի փայերի հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում). (տվյալ դասի տեղաբաշխված արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում առկա հաշիվների քանակը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Բաժնային արժեթղթերի, մասնակցության վկայագրերի, փայերի հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար՝ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ[1] / ամսական	**18,000 ՀՀ դրամ** 1-ից մինչև 49-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ
		22,000 ՀՀ դրամ 50-ից մինչև 99-ը ներառյալ ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ
		35,000 ՀՀ դրամ 100-ից մինչև 199-ը ներառյալ ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ
		45,000 ՀՀ դրամ 200-ից մինչև 499-ը ներառյալ ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ
		70,000 ՀՀ դրամ 500-ից մինչև 999-ը ներառյալ ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ
		110,000 ՀՀ դրամ 1000-ից և ավելի ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների

[1] Ընկերության տվյալ դասի տեղաբաշխված արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում առկա հաշիվների քանակը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ:

2.1.3 Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում). (արտարժույթով արտահայտված անվանական արժեք ունեցող պարտատոմսերի հաշվառման (արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման և պահպանման) սակագինը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ ամսվա վերջին օրվա համար ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի հաշվարկով)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Տեղաբաշխված պարտատոմ-սերի յուրաքանչյուր դասի համար ընդհանուր անվանա-կան արժեք /ամսական	0.004%

2.1.4 Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում (սակագինը վճարում է այն հաշվի օպերատորը, որի միջնորդությամբ վերակնքվել է պայմանագիրը)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Հաշվի օպերատորի փոփո-խության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերա-կնքում	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար/մեկ փոխանցում	6,000 ՀՀ դրամ

2.2 **Տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայություններ** (բացառությամբ կարգավորվող շուկայի միջոցով տեղաբաշխված, ինչպես նաև վերակազմակերպման հիմքով արժեթղթերի փոխարկումն ապահովելու համար լրացուցիչ տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառման դեպքերի, ընդ որում՝ արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման արդյունքում տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայությունների սակագինը տեղաբաշխման գործընթացի վերջում վերահաշվարկվում է ընդհանուր անվանական ծավալի սկզբունքով)

2.2.1 Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում (բաժնետոմսերի տեղաբաշխում՝ բացառությամբ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Տեղաբաշխված բաժնետոմ-սերի (փայերի) գրանցման հաշվառում	Տեղաբաշխված բաժնետոմ-սերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք (փայերի դեպքում սակագնի հաշվարկ-ման հիմք է ընդունվում փայերի շուկայական արժեքը)	Մինչև 3,000,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0.1% նվազագույնը՝ 30,000 ՀՀ դրամ**
		3,000,000,000 ՀՀ դրամից ավել՝ **3,000,000 ՀՀ դրամ**

2.2.2 Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում (պարտատոմսերի տեղաբաշխում՝ բացառությամբ պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	Մինչև 30,000,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0.01% նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ**
		30,000,000,000 ՀՀ դրամից ավել՝ **2,500,000 ՀՀ դրամ**

2.2.3 Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	Տեղաբաշխվող բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	Մինչև 1,000,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0.01% նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ**
		1,000,000,000 ՀՀ դրամից ավել՝ **750,000 ՀՀ դրամ**

2.2.4 Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	Մինչև 4,000,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0.008% նվազագույնը՝ 35,000 ՀՀ դրամ**
		4,000,000,000 ՀՀ դրամից ավել՝ **400,000 ՀՀ դրամ**

2.3 Թողարկողի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում

2.3.1 Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում (ներառում է արժեթղթերի փոխարկումը (այդ թվում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխման, արժեթղթերի համախմբման (կոնսոլիդացիա) և բաժանման հիմքով), թողարկողի որոշմամբ մեկ դասի (տեսակի) արժեթղթերը մեկ այլ դասի (տեսակի) արժեթղթերի փոխարկումը, վերակազմակերպման (բացառությամբ վերակազմավորման այն դեպքի, երբ արժեթղթերի քանակի և անվանական արժեքի փոփոխություն տեղի չի ունենում) արդյունքում արժեթղթերի փոխարկումը, թողարկողի՝ իր կողմից թողարկված արժեթղթերի (բացառությամբ պարտատոմսերի) ձեռքբերումը, հետգնումը և մարումը կամ չեղյալ համարումը: Ընդ որում՝ փոխարկման դեպքում սակագնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկման արդյունքում գրանցվող արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը, բացառությամբ բաժանման և առանձնացման ձևով

վերակազմակերպման հիմքով բաժնետոմսերի փոխարկման դեպքերի: Բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպման պայմանավորված կորպորատիվ գործողության դեպքում սակագնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկվող արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը):

Ծառայության անվանումը	Միավորը	սակագինը
Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում (բացառությամբ կարգավորող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի)	Կորպորատիվ գործողության առարկա արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	Մինչև 3,000,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0.1% նվազագույնը՝ 40,000 ՀՀ դրամ**
		3,000,000,000 ՀՀ դրամից ավել՝ **3,000,000 ՀՀ դրամ**
Կարգավորող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում	Կորպորատիվ գործողության առարկա՝ կարգավորող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի ընդհանուր ծավալ	Մինչև 3,000,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0,007%, նվազագույնը՝ 35,000 ՀՀ դրամ**
		3,000,000,000 ՀՀ դրամից ավել՝ **210,000 ՀՀ դրամ**
Թողարկողի արժեթղթերի հաշվի բացում (փակում)	Հաշիվ	Անվճար

2.4 Թողարկողի հարցման հիման վրա իր կամ իր կողմից թողարկված (տեղաբաշխված) արժեթղթերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման հետ կապված ծառայություններ

2.4.1 Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում	Ցուցակ	5,000 ՀՀ դրամ

2.4.2 Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի (առանց հիմքերի) տրամադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	Տեղեկանք	15,000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով)		

2.4.3 Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով), ընդ որում՝ սակագինը գանձվում է այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրվում են գործառնությունների հիմքերը կամ տեղեկանք գործառնությունների բացակայության վերաբերյալ

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	Տեղեկանք	25,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ

Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով)		35,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ

2.4.4 Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով), ընդ որում՝ սակագինը գանձվում է այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրվում են գործառնությունների հիմքերը կամ տեղեկանք գործառնությունների բացակայության վերաբերյալ

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	Տեղեկանք	25,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ
Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով)		35,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ

2.5 **Թողարկողի մասին տվյալների փոփոխությունների գրանցում Համակարգում** (ներառում է թողարկողի գտնվելու կամ գործունեության վայրի, բաժնետիրական ընկերությունների տեսակի, տնօրենի փոփոխության, ընկերության անվանման փոփոխության կամ արժեթղթերի մասին տեղեկությունների փոփոխությունը (արժեթղթերի փաստաթղթային ձևի փոփոխությունը ոչ փաստաթղթայինի և հակառակը))

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Տվյալների փոփոխության մուտքագրում Համակարգում		1,000 ՀՀ դրամ

Գլուխ 3: Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Հաշվի օպերատորի միջնորդությամբ թողարկողին մատուցվող լրացուցիչ ծառայություններ

3.1 **Թողարկողի հանձնարարագրի հիման վրա շահութաբաժինների հաշվարկում և վճարում**

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Շահութաբաժինների հաշվարկում և վճարում	Շահութաբաժինների վճարման համար նախատեսված ֆոնդի ընդհանուր գումար / յուրաքանչյուր գործընթացի համար	0.3%, նվազագույնը՝ 35,000 ՀՀ դրամ

3.2 **Թողարկողի հանձնարարագրի հիման վրա պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում**

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում	Վճարված/բաշխված դրամական միջոցների գումարը/ յուրաքանչյուր գործընթացի համար	0.02%, նվազագույնը՝ 35,000 ՀՀ դրամ

3.3 **Ծանուցում թողարկողին արժեթղթերի (փայերի) գործառնությունների մասին** (արժեթղթերի (փայերի) փոխանցման հանձնարարականների և արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Ծանուցում	Տարեկան	300,000 ՀՀ դրամ

3.4 Թողարկողին օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Հսկողության իրականացում	Տարեկան	1,000,000 ՀՀ դրամ

ԲԱԺԻՆ 3: ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ 4: Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Բանկի միջնորդությամբ հաշվետերերին մատուցվող արժեթղթերի (ինվեստիցիոն) հաշիվների վարման ծառայություններ

4.1 Սեփականատերերի արժեթղթերի հաշիվներում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանման հետ կապված ծառայություններ

4.1.1 Արժեթղթերի (փայերի) հաշվի բացում, փոփոխություն, պահպանում և փակում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Արժեթղթերի հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	1,000 ՀՀ դրամ ֆիզիկական անձանց համար
		2,000 ՀՀ դրամ իրավաբանական անձանց համար
Արժեթղթերի հաշվում նե-րառված տեղեկությունների փոփոխության գրանցում		5,000 ՀՀ դրամ
Հաշվում առկա արժեթղթերի պահպանում (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժե-թղթերի) պահպանում (այս ծառայության դիմաց սակա-գնի հաշվարկումը սկսվում է Բանկի կողմից հաշվետիրոջ հաշվի բացման / վերա-բացման պահից)	Յուրաքանչյուր ամսվա վերջին հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդի-սացող կամ ՀՀ կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի) մնացորդների անվանական արժեք / ամսական	0.001%, նվազագույնը 1,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի հաշվի փակում	Անվճար	1,000 ՀՀ դրամ

4.2 Կարգավորվող շուկայից դուրս արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված ծառայություններ (փոխանցման սակագինը չի գանձվում այն դեպքերում, երբ արժեթղթեր փոխանցող/ստացող կողմ է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկը)

4.2.1 Բաժնետոմսերի (փայերի) հասարակ փոխանցում (ներառյալ՝ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով) ցանկացած հիմքով, բացառությամբ 4.2.3, 4.2.4 և 4.2.7 կետերով սահմանված դեպքերի (վճարում է փոխանցող/շահագրգիռ կողմը): Ներառում է առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ),

ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին:

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում, (ներառյալ՝ ազատ առաքումը՝ համաձայնությամբ)	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք / վճարում է փոխանցող կողմը (կամ շահագրգիռ կողմը)	Մինչև 1,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **2,000 ՀՀ դրամ**
		1,000,000-ից մինչև 3,000,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0.1%**
		3,000,000,000 ՀՀ դրամից ավել՝ **4,500,000 ՀՀ դրամ**

4.2.2 Պարտատոմսերի հասարակ փոխանցում (ներառյալ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով) ցանկացած հիմքով, բացառությամբ 4.2.3, 4.2.4 և 4.2.7 կետերով սահմանված դեպքերի (վճարում է փոխանցող/շահագրգիռ կողմը: Ներառում է առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին:

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Պարտատոմսերի փոխանցում, (ներառյալ՝ ազատ առաքումը՝ համաձայնությամբ)	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք /վճարում է փոխանցող կողմը (կամ շահագրգիռ կողմը)	Մինչև 2,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **1,000 ՀՀ դրամ**
		2,000,000 ՀՀ դրամից մինչև 4,000,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0.01%** **նվազագույնը՝ 4,000 ՀՀ դրամ**
		4,000,000,000 ՀՀ դրամից ավել՝ **400,000 ՀՀ դրամ**

4.2.3 Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում մեկ հաշվից մյուսին

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում	Հանձնարարագիր / վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը	9,000 ՀՀ դրամ

4.2.4 Պորտֆելի փոխանցում՝ Բանկում բացված հաշվետիրոջ հաշվից այլ հաշվի օպերատորի մոտ բացված տվյալ հաշվետիրոջ հաշվին՝ արժեթղթերի հաշվում առկա ամբողջ մնացորդի փոխանցմամբ

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Պորտֆելի փոխանցում	Հանձնարարագիր / վճարումը իրականացնում է փոխանցող կողմը	6,000 ՀՀ դրամ

4.2.5 Բաժնետոմսերի փոխանցում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով ցանկացած հիմքով

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Բաժնետոմսերի DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք / վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը	Մինչև 1,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **2,400 ՀՀ դրամ**
		1,000,000 մինչև 2,000,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0.2%**
		2,000,000,000 ՀՀ դրամից ավել՝ **2,920,000 ՀՀ դրամ**

4.2.6 Պարտատոմսերի փոխանցում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով ցանկացած հիմքով

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Պարտատոմսերի DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք/ վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը	Մինչև 10,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **2,400 ՀՀ դրամ**
		10,000,000 մինչև 2,000,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0.02%**
		2,000,000,000 ՀՀ դրամից ավել՝ **400,000 ՀՀ դրամ**

4.2.7 Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցում	Իրացվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք/ վճարումը իրականացնում է գրավառուն	Մինչև 140,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0.3%, նվազագույնը՝ 7,000 ՀՀ դրամ**
		140,000,000 ՀՀ դրամից ավել՝ **420,000 ՀՀ դրամ**

4.3 Արժեթղթերի գրավադրման, սառեցման, առևտրային արգելադրման, ինչպես նաև ձայնի իրավունքի սահմանափակման գրանցման հետ կապված ծառայություններ

4.3.1 Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարագրով տվյալ հաշվետիրոջ անձնական հաշվում արժեթղթերի գրավադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Բաժնետոմսերի գրավադրում	Գրավի առարկա արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք / վճարումը իրականացնում է գրավատուն / շահագրգիռ կողմը	Մինչև 3,000,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0.01%, նվազագույնը 7,000 ՀՀ դրամ**
		3,000,000,000 ՀՀ դրամից ավել՝ **3,000,000 ՀՀ դրամ**
Պարտատոմսերի գրավադրում	Գրավի առարկա պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք / վճարումը	Մինչև 3,000,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0.072%, նվազագույնը 7,000 ՀՀ դրամ**

	իրականացնում է գրավատուն / շահագրգիռ կողմը	3,000,000,000 ՀՀ դրամից ավել՝ **3,000,000 ՀՀ դրամ**

4.3.2 Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում արժեթղթերի առևտրային արգելադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Սառեցում	Սառեցված արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք / վճարումը իրականացնում է հաշվետերը	Մինչև 3,000,000,000 ՀՀ դրամը ներառյալ՝ **0.01%, նվազագույնը 5,000 ՀՀ դրամ**
		3,000,000,000 ՀՀ դրամից ավել՝ **3,000,000 ՀՀ դրամ**

4.3.3 Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում արժեթղթերի առևտրային արգելադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Առևտրային արգելադրում		1,000 ՀՀ դրամ

4.3.4 Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում արգելադրված բաժնետոմսերի համար

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում	Քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	0.5%, նվազագույնը՝ 10,000 ՀՀ դրամ

4.3.5 Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում	Գրավադրված, սառեցված, առևտրային նպատակով արգելադրված և այլ սահմանափակումների ենթարկված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	Անվճար

4.4 Հաշվետիրոջը տեղեկությունների տրամադրում

4.4.1 Հաշվետիրոջ հարցման հիման վրա Բանկում բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից (այդ թվում՝ ռեեստրից) քաղվածքի կամ արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում՝ հաշվում առկա միայն մեկ դասի արժեթղթի մասով (ռեեստրից քաղվածք))	Քաղվածք	1,000 ՀՀ դրամ

Արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ հաշվետվության տրամադրում	Հաշվետվություն	10,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում	Տեղեկանք	3,000 ՀՀ դրամ

4.4.2 Հաշվետիրոջ հարցման հիման վրա Բանկում բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից այլ տեղեկությունների վերաբերյալ ռեեստրից կամ արժեթղթերի հաշվից տեղեկանքի տրամադրում (հիմքերով)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	Տեղեկանք	15,000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով)		20,000 ՀՀ դրամ

4.5 Անվանատիրոջ հաշիվների բացման և հաշվում առկա արժեթղթերի պահպանման հետ կապված ծառայություններ

4.5.1 Հաշվի օպերատոր չհանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	400,000 ՀՀ դրամ
Անվանատիրոջ հաշվում նեռառված տեղեկությունների փոփոխության գրանցում		1,000 ՀՀ դրամ
Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանում	Յուրաքանչյուր ամսվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի) մնացորդների անվանական արժեք / ամսական	0.001%

4.5.2 Հաշվի օպերատոր հանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	50,000 ՀՀ դրամ
Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում		Անվճար
Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի պահպանում	Յուրաքանչյուր ամսվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչ-պես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ կենտրոնական Բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի) մնացորդների անվանական արժեք / ամսական	0.001%

Գլուխ 5: Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահառուական ծառայություններ

5.1 Հաշվում առկա արժեթղթերի պահպանում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Բաժնային արժեթղթերի (այդ թվում՝ ֆոնդի փայերի) պահպանում	Սեփականատիրոջ (անվանատիրոջ) հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր ծավալ / ամսական (արժեթղթերի մնացորդի օրական հաշվարկով)	Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից գանձվող սակագին (ներառյալ հարկերը) **+50% հավելագին**
Պարտքային արժեթղթերի պահպանում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից թողարկված եվրոպարտատոմսերի)		
Հայաստանի Հանրապետության անունից թողարկված եվրոպարտատոմսերի պահպանում		0.0025%

5.2 Կորպորատիվ գործողություններ

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Արժեթղթերից ստացվող եկամուտների մուտքագրում հաշվին	Ըստ յուրաքանչյուր գործառնության	Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից գանձվող սակագին (ներառյալ հարկերը) **+50% հավելագին**
Արժեթղթերի մարում		
Շահութաբաժինների վճարում		

Այլ պարտադիր գործողություններ		
Ոչ պարտադիր գործողություններ		
Ռայթերի առք և վաճառք	Գործարքի առարկա արժեթղթերի ծավալ	
Հարկերի պահում, հարկային հավաստագրերի մշակում, հարկերի վերադարձման, ճշգրտման գործողություններ	Ըստ յուրաքանչյուր դեպքի	

5.3 Ժողովներին հեռակա մասնակցության ապահովում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Ծանուցումների ստացում	Ըստ յուրաքանչյուր ժողովի	Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից գանձվող սակագին (ներառյալ հարկերը) **+50% հավելագին**
Օրակարգի ստացում		
Մուտքի քարտի պատվիրում		
Քվեարկության հանձնարարականի կատարում		

5.4 Արժեթղթերով արտաքին (անդրսահմանային) վերջնահաշվարկի կատարման ծառայություններ

(վերջնահաշվարկի ենթակա սակայն դեռևս չկատարված հանձնարարականները հանձնարարականի մուտքագրումից հետո 45-րդ օրը ենթակա են ավտոմատ չեղարկման, որի համար գանձվում է վերջնահաշվարկի կատարման վճարի չափով գումար)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Պարտքային, բաժնային արժեթղթերով և ֆոնդի փայերով վերջնահաշվարկի հանձնարարականի կատարում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից գանձվող սակագին (ներառյալ հարկերը) **+50% հավելագին**
Սխալ ֆորմատավորված կամ ժամկետից ուշ ներկայացված հանձնարարականի մշակում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	
Արժեթղթերի ֆիզիկական առաքման կամ ստացման հետ կապված ծախսեր (ներառյալ ապահովագրությունը)	Ըստ յուրաքանչյուր դեպքի	
Վերջնահաշվարկի խմբային հանձնարարականի (group matching) կատարում	Ըստ յուրաքանչյուր գործարքի	
Պարտքային, բաժնային արժեթղթերով և ֆոնդի փայերով վերջնահաշվարկի հանձնարարականի չեղարկում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	

5.5 Դրամական միջոցներով վերջնահաշվարկի կատարման ծառայություններ

(վերջնահաշվարկի ենթակա սակայն դեռևս չկատարված հանձնարարականները հանձնարարականի մուտքագրումից հետո 45-րդ օրը ենթակա են ավտոմատ չեղարկման, որի համար գանձվում է վերջնահաշվարկի կատարման վճարի չափով գումար)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը

Դրամական միջոցների մուտքագրման և ելքագրման հանձնարարականի կատարում (ներառյալ preadvice հանձնարարականները)	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից գանձվող սակագին (ներառյալ հարկերը) **+50% հավելագին**
Դրամական միջոցներով գործառնություններ առանց հանձնարարականի	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	
Սխալ ֆորմատավորված կամ ժամկետից ուշ ներկայացված հանձնարարականի մշակում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	

5.6 Հաշվետվությունների տրամադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Կորպորատիվ գործողությունների ծանուցում	Ըստ յուրաքանչյուր ծանուցման	Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից գանձվող սակագին (ներառյալ հարկերը) **+50% հավելագին**
Կորպորատիվ գործողությունների հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Ամսական ստացվելիք տոկոսագումարների տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Հաշվում առկա արժեթղթերի վերաբերյալ հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Դրամական միջոցների վերաբերյալ այլ հաշվետվություններ	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Գործառնությունների վերաբերյալ տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Սպասվող գործառնությունների տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Վերջնահաշվարկի հաստատման հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Արժեթղթերով վարկավորման հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Կորպորատիվ գործողությունների ընդհանրական հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Հաշվում առկա արժեթղթերի բացվածքի տրամադրում ըստ շուկաների	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Հաշվետվությունների ուղարկում փոստով կամ էլ. փոստով	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Հանձնարարականի հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Վերջնահաշվարկի հանձնարարականի կարգավիճակի հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	

Հաշվից ելքագրման կամ հաշվին մուտքագրման հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	